ԼՐԱՏՈՒ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱԿԱՆԱՎՈՐ ՀԵՏԱԶՈՏՈՂԸ

## (ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Բ. Ն. Առաքելյանի ծննդյան 70-ամյակը)

*Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, ՀՍՍՀ գիտության վաստակավոր գործիչ, պետական մրցանակի դափնեկիր, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Բաբկեն Նիկոլայի Առաքելյանը բոլորեց իր կյանքի յոթանասուն տարին։ Ավելի քան 40 տարի նա իրեն նվիրաբերել է Հայաստանի հին և միջին դարերի պատմության, մշակույթի, արվեստի, նյութական մշակույթի հուշարձանների հետազոտությանը։*

*Բ. Ն. Առաքելյանը ծնվել է 1912 թ., Հոկտեմբերյանի շրջանի Մրգաշատ գյուղում։ Միջնակարգ կրթություն ստանալուց հետո 1933 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը։ 1936—1938 թթ. նա Լենինգրադում ունկնդրում է ականավոր պատմաբանների, հնագետների, արվեստաբանների, մշակույթի ընդհանուր պատմության մասնագետների։ Այդ տարիներից նրա տարերքը դառնում է հնագիտությունը, հայոց պատմությունն ու մշակույթը՝ Մերձավոր արևելքի պատմության և մշակույթի պատմության ընդհանուր աղերսների մեջ։ 1938 թ. Բ. Ն. Առաքելյանը ընդունվում է ՍՍՀՄ ԳԱ հայկական մասնաճյուղի ասպիրանտուրան, գիտական աշխատանքի պատրաստվում Երևանում և վերստին Լենինգրադում՝ ակադեմիկոս Հ. Օրբելու ղեկավարությամբ։ Լենինգրադն իր ակադեմիական հաստատություններով, համալսարանով, Պետական Էրմիտաժով, հարուստ ու բազմազան գիտելիքներ հաղորդելով Բ. Ն. Առաքելյանին, կանխորոշում է նրա հետագա գիտահետազոտական ուսումնասիրությունների բազմակողմանիությունը։ Արդ, ի՞նչ ընտրել. անցյալի պատմություն, հնագիտություն, թե՞ արվեստ։ Եվ նա ընտրեց դրանք միասնաբար։*

*Հայրենական մեծ պատերազմը սկսված էր, երբ նա պաշտպանելով հայկական պատկերաքանդակներին նվիրված թեկնածուական դիսերտացիան՝ բանակ զորակոչվեց, եղավ ռազմաճակատում, անցավ ահեղ փորձություններ, մարտական մեծ ճանապարհ՝ Հյուսիսային Կովկասից մինչև Բեռլին։ Հայրենիքի հանդեպ իր քաղաքացիական պարտքը կատարած Բ. Ն. Առաքելյանը վերադառնում է և վերսկսում գիտական աշխատանքը ՀՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտում։ Իր նախասիրությունների և հետաքրքրությունների ոլորտին համապատասխան, նա զբաղվում է Հայաստանի հին և միջին դարերի պատմության, նյութական մշակույթի և արվեստի ուսումնասիրությամբ։ 1949 թ. հրատարակվում է նրա «Հայկական պատկերաքանդակները 4—7-րդ*

դարերում» հետաքրքիր ուսումնասիրությունը՝ նվիրված այդ դարերի հայ աշխարհիկ, կրոնական, առասպելական, խորհրդանշական բնույթի քանդակների քննությանը։ Հեղինակը բացահայտում է նշված քանդակների խմբերից յուրաքանչյուրի ներքին բովանդակությունը, սոցիալական տարբեր խավերի կենցաղի և գաղափարախոսության արտահայտությունները, քանդակներից շատերի ավանդական-ժողովրդական բնույթը, մյուսների՝ վաղ ֆեոդալական աշխարհիկ և կրոնական գաղափարախոսության հաստատման նպատակամղվածությունը։ Քննության առարկա են հանդիսացել նաև IV—VII դդ. քանդակագործական արվեստը, նրա զարգացման մակարդակը և առանձնահատկությունները։ Պատմահնագիտական, արվեստագիտական տեսական պրպտումների արգասիք հանդիսացող այս աշխատությամբ հեղինակը հաստատեց, որ հիմնավորապես է մուտք գործում հայագիտության անդաստան։

Բ. Ն. Առաքելյանի գիտական վաստակի մեջ կարևոր տեղ է գրավում Հայաստանի միջնադարյան քաղաքների ուսումնասիրությունը։ Երկար տարիների տքնաջան աշխատանքի արգասիք է նրա «Քաղաքները և արհեստները Հայաստանում IX—XIII դդ.» երկհատոր մենագրությունը, որտեղ Հայաստանի պատմության հենքի վրա թափանցելով միջնադարի իրողությունների խորքը, հեղինակը ծանրանում է Հայաստանի միջնադարյան քաղաքների առաջացման ու զարգացման հարցերի վրա, լուսաբանում արհեստների, արհեստագործության մեջ տեղի ունեցած աշխատանքի բաժանումը, համքարությունների, ներքին և արտաքին առևտրի, քաղաքների ներքին կյանքի, սոցիալական կառուցվածքի, դասային և դասակարգային ներհակությունների հարցերը, քաղաքների անկման պատճառները։ Աշխատության վավերագրական հիմքերի ամրապնդմանը մեծապես նպաստել են վերջին տասնամյակներում հնագիտական պեղումներով հայտնաբերված նոր հնագիտական հուշարձաններն ու գտածոները։

«Քաղաքները և արհեստները Հայաստանում IX—XIII դդ.» աշխատությունը Հայաստանի հասարակական-տնտեսական և մշակութային պատմությանը նվիրված ծավալուն, համակողմանի ուսումնասիրություն է, հասուն գիտնականի աչքի ընկնող ներդրում գիտության մեջ, որի համար Բ. Ն. Առաքելյանին 1955 թ. շնորհվեց պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան։

Բ. Ն. Առաքելյանի արգասավոր գիտական գործունեության մեջ առաջնակարգ տեղ է գրավում Հայաստանի հնագիտական ուսումնասիրությունը։ Որպես հնագետ նրա մատուցած մեծ ծառայություններից մեկը հայ ժողովրդի պատմության հույժ կարևոր դարաշրջանի՝ վաղ հայկական, հելլենիստական և ետհելլենիստական դարաշրջանների նյութական մշակույթի հայտնագործումն ու իմաստավորումն է։ Ավելի քան երեսուն տարի առաջ Բ. Ն. Առաքելյանը ձեռնամուխ եղավ առաջնակարգ նշանակություն ունեցող և անհետաձգելի այդ պրոբլեմի մշակմանը։ 1949 թ. Բ. Ն. Առաքելյանի ղեկավարությամբ սկսվեցին և մինչև օրս հաջողությամբ շարունակվում են Գառնի ամրոցի պեղումները, որի արդյունքները հանրագումարի են բերված Բ. Ն. Առաքելյանի «Գառնի» աշխատության երեք գրքերում։ 1968 թ. անգլերեն ընթերցողի սեփականությունը դարձան վերջինիս առաջին և երկրորդ գրքերը, որոնք հրատարակվել են ԱՄՆ-ում։

Բ. Ն. Առաքելյանի նախաձեռնությամբ սկզբնավորվեց և այժմ հաջողությամբ առաջ է տարվում հայոց հին մայրաքաղաքներ Արմավիրի (1962—1969) և Արտաշատի (1970) հնագիտական ուսումնասիրությունը։ Այս հինավուրց քաղաքների պեղումներով երևան են եկել պաշտպանական, քաղաքացիական բնույթի մոնումենտալ կառույցներ, հսկայական թիվ կազմող առաջնակարգ հնագիտական նյութեր, որոնք լայն կտավով ներկայացնում են հայ ժողովրդի ինքնատիպ մշակույթը։ Այդ նյութերի ուսումնասիրությամբ պարզվում է, թե ինչ օրինաչափություններով է զարգացել հայ մշակույթը՝ Ուրարտուի անկումից սկսած մինչև քրիստոնեության արշալույսը հարատևած ժամանակաշրջանում։

Բ. Ն. Առաքելյանի առավել նշանակալից ծառայությունն այն է, որ նրա անմիջական ղեկավարությամբ Գառնիի, Արմավիրի, Արտաշատի պեղումներով հայտնաբերվեցին, ուսումնասիրվեցին և համընդհանուր ճանաչում ստացան Հայաստանի հելլենիստական շրջանի ինքնատիպ մշակույթն ու արվեստը։ Մեր ժողովրդի պատմության մեջ դա այն ժամանակաշրջանն էր, երբ բարձր զարգացման է հասնում հայ պետականությունը, երկիրն ապրում է տնտեսական և մշակութային աննախընթաց վերելք։ Հայ մշակույթի ուսումնասիրության հանրագումարը հանդիսացավ 1976 թ. հայերեն և ռուսերեն լեզուներով (առանձին գրքերով) հրատարակված, երեսնամյա գիտական որոնումների արդյունք հանդիսացող «Ակնարկներ հին Հայաստանի արվեստի պատմության» ընդհանրացնող մենագրությունը, որտեղ լուսաբանված է երկար ճանապարհ և զարգացման տարբեր փուլեր անցած հայ արվեստի պատմությունը։ Շրջանառության մեջ են գրվել արվեստի նորահայտ, հազվագյուտ արժեքավոր ստեղծագործություններ։ Թեև գրքի վերտառությունը այն հանձնարարում է խբրև մ. թ. ա. VI դ.—մ. թ. III դ. արվեստի կոթողներին նվիրված ակնարկներ, իրականում աշխատությունը ներկայացնում է Հայաստանի այդ ժամանակահատվածի մշակույթի բազմակողմանի համայնապատկերը։ Այդ աշխատության համար հեղինակը 1978 թ. արժանացավ Հայկական ՍՍՀ պետական մրցանակի։

Բ. Ն. Առաքելյանը հեղինակ է 110-ից ավելի աշխատությունների՝ նվիրված հայ ժողովրդի պատմության, նյութական մշակույթի և արվեստի բազմաղան հարցերին։ Այդ աշխատություններին բնորոշ է փաստական նյութի վերլուծական քննությունը, ընդհանրացումը և նորույթը։ Անվանի գիտնականը գործուն մասնակցություն է ցուցաբերել հայ ժողովրդի պատմությունն ընդհանրացնող կոլեկտիվ աշխատությունների ստեղծմանը։ Նա եղել է հայ ժողովրդի պատմության 1951 և 1957 թթ. լույս տեսած դպրոցական դասագրքի հեղինակներից և խմբագիրներից մեկը։ Առավել նշանակալից է նրա մասնակցությունը հայ ժողովրդի պատմության ակադեմիական բազմահատոր հրատարակության ստեղծմանը։ Նա այդ բազմահատորյակի I, II, III հատորների հեղինակներից է, III հատորի պատասխանատու խմբագիրը։ 1981 թ. լույս տեսավ հայ ժողովրդի պատմության 7—8-րդ դասարանների դպրոցական դասագիրքը, որի հնագույն ժամանակներից մինչև XVIII դ. բաժինը գրել է Բ. Ն. Առաքելյանը։

Նշանակալի է Բ. Ն. Առաքելյանի գիտամանկավարժական գործունեությունը։ Հայաստան աշխարհի, հայ ժողովրդի ծանր ճակատագրի և մաքառումների հերոսական տարեգրությունը, նրա մեծ մշակույթի պատմությունը Բ. Ն. Առաքելյանը տարիներ շարունակ ավանդել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում, Բրյուսովի անվան ռուսաց և օտար լեզուների պետական մանկավարժական ինստիտուտում։ Անվանի գիտնականն ու դասախոսը լուրջ աշխատանք է կատարել հնագետներ պատրաստելու ուղղությամբ։ Նրա ղեկավարած հնագիտական արշավախմբերը դարձել են հնագիտական կադրեր պատրաստելու իսկական դարբնոց։

Բ. Ն. Առաքելյանը գիտական բեղմնավոր աշխատանքը հաջողությամբ զուգակցում է գիտության եռանդուն կազմակերպչի գործունեության հետ։ Հնագիտության և ազգագրության ինստիտուտը կյանքի կոչվելու պահից՝ 1959 թ. մինչև օրս, նա անընդմեջ գլխավորում է հայագիտական այդ կարևոր հաստատության գործունեությունը, որը նրա մեծ ջանքերի շնորհիվ դարձել է Հայաստանի նյութական և հոգևոր մշակույթի ուսումնասիրության կարևոր կենտրոն։ Ինստիտուտի ստեղծումով Հայաստանի հնագիտական հուշարձանների, հայ ազգագրության, բանահյուսության ուսումնասիրությունը դրվեց առավել գործնական, ծավալուն ծրագրային բարձր հիմքերի վրա։ Բ. Ն. Առաքելյանի նախաձեռնությամբ են հրատարակվում «Հնագիտական պեղումները Հայաստանում», «Հայաստանի հնագիտական հուշարձանները», «Դիվան հայ վիմագրության», «Հայ ազգագրություն և բանահյուսություն» մատենաշարերը։

Երկար տարիներ է, ինչ Բ. Ն. Առաքելյանը գլխավորում է ՀՍՍՀ ԳԱ գիտամեթոդական խորհրդի աշխատանքները, որի հիմնական խնդիրներից մեկը նյութական մշակույթի հուշարձանների, հնագիտական արժեքների պահպանությունն է։ Բ. Ն. Առաքելյանը մշտապես արձագանքում է հայագիտության հետ առնչվող հարցերին ու միջոցառումներին։ Նա գիտության ակտիվ պրոպագանդիստ է ինչպես մեր երկրում, նույնպես և նրա սահմաններից դուրս։ Որպես ճանաչված հնագետ Բ. Ն. Առաքելյանը Հայաստանի հնագիտության նվաճումները բազմիցս ներկայացրել է միութենական հնագիտական (Երևան, Թբիլիսի, Կիև, Մոսկվա, Լենինգրադ) նստաշրջաններում, Իտալիայում և Հայաստանում (Միլան, Երևան, Բերգամո) կայացած հայ արվեստին նվիրված միջազգային գիտաժողովներում, պատմաբանների և արևելագետների միջազգային կոնգրեսներում, արտասահմանյան հնագիտական կենտրոններում ու համալսարաններում (Վելիկի Տիրնովո, Նեսեբր, Ստոկհոլմ, Փարիզ, Լոս Անջելոս)։

Բազմակողմանի և արդյունաշատ գիտական վաստակի համար 1967 թ. Բ. Ն. Առաքելյանին շնորհվեց գիտության վաստակավոր գործչի կոչում. նա 1968 թ. ընտրվեց ՀՍՍՀ ԳԱ թղթակից անդամ, իսկ 1974 թ.՝ ակադեմիկոս։

Կուսակցությունն ու կառավարությունը բարձր գնահատելով Բ. Ն. Առաքելյանի գիտական, դիտամանկավարժական, գիտակազմակերպչական և հասարակական եռանդուն գործունեությունը, նրան պարգևատրել են շքանշաններով ու մեդալներով։ ՍՍՀՄ Գերագույն սովետի նախագահությունը 1982 թ. հունվարի 29-ի հրամանագրով պատմագիտության բնագավառում ունեցած ծառայությունների համար և ծննդյան յոթանասուն ամյակի առթիվ Բ. Ն. Առաքելյանին պարգևատրեց Աշխատանքային կարմիր դրոշի շքանշանով։ Նա այսօր էլ երիտասարդական ավյունով շարունակում է ընթացք տալ Արտաշատի, Գառնիի պեղումներին ու ինստիտուտում կատարվող աշխատանքներին։

Իր կյանքի յոթանասունը բոլորած գիտնականին, Հայաստանի պատմության և մշակույթի բոլորանվեր մշակին, ցանկանանք երկար կյանք, քաջառողջություն, անձնական երջանկություն, ստեղծագործական նորանոր հաջողություններ։

ԳՐԻԳՈՐ ԿԱՐԱԽԱՆՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու

## ՄԵԾԱՐԳՈ ՀՈԲԵԼՅԱՐ

Հայաստանի գիտական ողջ հասարակայնության հետ միասին «Լրաբեր հասարակական գիտությունների» ամսագրի խմբագրական կոլեգիան սրտանց շնորհավորում է Ձեզ՝ մեծ գիտնականիդ, ազնիվ և հայրենասեր քաղաքացուդ, մեր խմբագրական կոլեգիայի ջանասեր անդամիդ՝ Ձեր ծննդյան 70-ամյակի առթիվ: Մաղթում ենք Ձեզ քաջառողջություն և երկար կյանք՝ հոգուտ մեր բազմադարյան մշակույթի ու պատմության հետագա արգասաբեր ուսումնասիրության:

«ԼՐԱԲԵՐ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ»
ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈԼԵԳԻԱ